ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

27 փետրվարի 2014 թվականի N 15-Ա

ք. Հրազդան

Ա. ԳԱԼՍՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի և 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն *Արթուր Գալստյանին* տրամադրել 2014 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տաս աշխատանքային օր՝ 2014 թվականի մարտի 11-ից մինչև մարտի 24-ը ներառյալ:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 709-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը:

2. *Արթուր Գալստյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Ծաղկաձորի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ *Գայանե Խաչատրյանի*, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ *Արուս Բախշյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ